# «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

*2020-2021 ուսումնական տարվա հաշվետվություն*



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ 3

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 5

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, ՆՊԱՏԱԿ, ՏԵՍԼԱԿԱՆ 6

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 7

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ 13

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 14

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ 16

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 19

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ 27

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ 28

ՆՇԱՆԱԿԱԼԻ ԽՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ 31

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ 32

ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ 34

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 35

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 36

ՄԵՐ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՅՏՆԻ ՀՅՈՒՐԵՐԸ 37

ՇՐՋԱՅՑԵՐ 39




# ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ



## ՀՐԱՆՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն*

2015 թ-ին « Գազպրոմ» ՀԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի համատեղ ջանքերով մեկնարկեցին Ուսումնա-սպորտ ային համալիրի կառուցման աշխատանքները:

Մեր ընկերության պատմության և լայնածավալ գործունեության մեջ 2019 թվականն իր ուրույն տեղում է գտնվում Ուսումնա-սպորտային համալիրի բացումով: Պետք է արձանագրել, որ մենք պատվով ենք կատարել մեր առաջ դրված  խնդիրը, որի արդյունքում համալիրն իր տեսակով հավասարը չունի մեր երկրում ու ողջ տարածաշրջանում:  Այսօր արդեն իրականություն դարձած մեր համալիրն իր տեսակի մեջ եզակի է, եզակի իր լաբորատորիաներով, դասարաններով, նյութատեխնիկական  գերհագեցվածությամբ, սպորտային ուղղություններով, արվեստի ճյուղերով և այլ հնարավորություններով:

Ներկայումս համալիրում իրենց աշխատանքային գործունեությունն են ծավալում կրթության և սպորտի բնագավառի բարձր որակավորում ունեցող լավագույն մասնագետները: Իմ համոզմունքն է, որ կրթությունն ամենաթանկ կապիտալն է, ամենաարդարացված ներդրումն ու առաջընթացի նախապայմանը: Ստանձնելով որակյալ կրթություն ապահովելու կարևոր առաքելությունը՝ «Գազպրոմ Արմենիա» ընկերության Ուսումնա-սպորտային համալիրը վստահաբար մեծ դերակատարում է ունենալու կրթված, մրցունակ և առողջ սերունդ ձևավորելու գործում:

Վստահ եմ, որ ղեկավարության և անձնակազմի պրոֆեսիոնալ, նվիրված ու ամենօրյա համառ աշխատանքի արդյունքում համալիրը կդառնա իր ոլորտի առաջատարն ու օրինակելին՝ ինչը բնորոշ է  «Գազպրոմ Արմենիային»:

## ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ



### ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրեն*

2019 թվականին կյանքի կոչվեց «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Ուսումնա-սպորտային համալիրը, որի գործունեության մեկնարկը վստահված էր մեզ:

Այս առանցքային իրադարձությունը բոլորիս համար շատ կարևոր ու պարտավորեցնող է: Հավատում եմ, որ անբասիր պատմական ուղի կերտելու մեր քայլերը հաջողվելու են, քանի որ մեկտեղելու ենք բոլորիս ջանքերը և դա լինելու է բոլորիս հաջողությունը:

Մեր համալիրն իր մեջ ներառում է դպրոց, մանկապարտեզ, սահադաշտ, մարզաառողջարարական կենտրոն և լողավազան, որոնք նախատեսված են ինչպես մեր դպրոցի աշակերտների, այնպես էլ բոլոր օգտվել ցանկացողների համար:

Մեր համալիրն իր բոլոր հնարավորություններն օգտագործում է առաջնային նպատակի՝ սաների հնարավորությունների հավասար զարգացումն ապահովելու համար: Մեր առաջ որպես օրակարգային հարց դրված էր կադրային ճիշտ քաղաքականության իրականացումը, և այսօր արդեն մեր համալիրում աշխատում են կրթության ու սպորտի բնագավառի վաստակաշատ մասնագետները: Մեր համալիրի յուրաքանչյուր աշխատակից իր աշխատանքային ոլորտում փորձառու է, նորարար և ամբողջովին նվիրված իր գործին:

Վստահ եմ, որ ունենալու ենք թռիչքային զարգացումներ, գիտելիքների մեծ պաշար ունեցող և պատվո հարթակների ամենաբարձր աստիճանին կանգնող աշակերտներ, մրցունակ շրջանավարտներ, որոնք կլինեն գիտելիքահեն հասարակության հիմքն ու Հայաստանի ապագան:







# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի ապրիլի 16-ին՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում, տեղի ունեցավ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Ուսումնա-սպորտային համալիրի հիմնարկեքի արարողությունը, որին մասնակից էին Հայաստանի Հանրապետության նախագահը, «Գազպրոմ» ՀԲԸ Վարչության և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Վարչության նախագահները:

Իր տեսակի մեջ նմանը չունեցող կրթահամալիրի կառուցումն իրականացվել է «Գազպրոմը՝ երեխաներին» լայնածավալ ծրագրի շրջանակում, իսկ ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացվել է «Գազպրոմ» ՀԲԸ կողմից:

2016 թվականի ապրիլին արդեն մեկնարկել էր Ուսումնա-սպորտային համալիրի շինարարությունը, որը տևեց շուրջ երեք տարի:







# ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿ

ՈՒՍՀ առաքելությունը՝ ազատ, ներդաշնակ զարգացող, ստեղծագործ և մտածող անձի ձևավորում:



Տեսլականը՝ դառնալ Հայաստանի մասնավոր հանրակրթական հաստատությունների շրջանում առաջատարներից մեկը՝ ընձեռելով լավագույն հնարավորություններն առողջ երեխաների ազատ ու ներդաշնակ զարգացման համար:

Նպատակը՝ ստեղծել անվտանգ և առողջ միջավայր, որը հնարավորություն կտա երեխաներին ձեռք բերել մտավոր, հոգևոր և ֆիզիկական զարգացմանը նպաստող գիտելիքներ և սոցիալական հմտություններ:

# ԿԱՌ ՈՒՑՎ ԱԾՔ

## ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ ՓՈՂՈՑԻ 55/25 ՀԱՍՑԵՈՒՄ`

**31,841Մ²** ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ



# ՈՒՍՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ՝

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

- կրտսեր 1-ին խումբ (2-3 տ.)
- կրտսեր 2-րդ խումբ (3-4 տ.)
- միջին խումբ (4-5 տ.)
- ավագ խումբ (5-6 տ.)

## ԴՊՐՈՑ

- տարրական դպրոց (1-4 դաս.)
- հիմնական դպրոց (5-9 դաս.)
- ավագ դպրոց (10-12 դաս.)

## ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

- փակ սահադաշտ
- մարզասրահներ
- լողավազաններ
- խաղային ձևերի դահլիճներ
- բաց խաղահրապարակ







# ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ





















# ԴՊՐՈՑ















# ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ




















# ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՍԱՆԵՐԸ






# ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ



## ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան



## ԿԱՐԵՆ ՄՈՎՍԵՍՅԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գլխավոր տնօրենի տեղակալ ֆինանսների և էկոնոմիկայի գծով



## ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ՔՎԱՆՏ» վարժարանի տնօրեն



## ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի ֆիզկուլտուրայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ ՀԱՕԿ նախագահի խորհրդական



## ՍԱՄՎԵԼ ՃՈՒՔՈՒՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ

ԵՊՀ ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի տնօրեն

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



## Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Խորհրդի նախագահ,*
*«Գազպրոմ Արմենիա»*
*ՓԲԸ ՈՒՍՀ տնօրեն*



## Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*ՈՒՍՀ դպրոցի ուսումնական*
*աշխատանքների*
*պատասխանատու*



## Ե. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

*ՈՒՍՀ տնօրենի տեղակալ*
*ուսումնական և*
*դաստիարակչական*
*աշխատանքների գծով*



## Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

*Խորհրդի քարտուղար,*
*ՈՒՍՀ դպրոցի ուսուցչուհի*



## Է. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

*ՈՒՍՀ դպրոցի ուսումնական*
*աշխատանքների*
*պատասխանատու*



## Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ



## Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Բնագիտության ամբիոնի վարիչ



## Ս. ՇԱՀԻՆՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Մաթ. և ֆիզիկայի ամբիոնի վարիչ



## Թ. ԱՌՈՒՇԱՆՈՎԱ

ՈՒՍՀ դպրոցի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ



## Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ



## Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ



## Ի. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ՈՒՍՀ դպրոցի Օտար լեզուների ամբիոնի վարիչ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ՈՒՂՂՎԱԾ Է ԵՐԵԽԱՅԻ ՄՏԱՎՈՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԶԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ, ԴՊՐՈՑՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԼԱՅՆՈՐԵՆ ՄՏԱԾԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳԻՐՆ ԻՐ ՄԵՋ ՆԵՐԱՌՈՒՄ Է՝



# ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԴՊՐՈՑՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆ ՈՒ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄՆ Է: ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵԶ ՄՈՏ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԻՆՉԻ ՇՆՈՐՀԻՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՍՈՎՈՐՈՂԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ:

ԱՅԴ Է ՊԱՏՃԱՌԸ, ՈՐ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՈՉՎՈՒՄ Է «ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ»

## ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ՝ ՌՈՒՍԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ

## ՊԱՐՏԱԴԻՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1. ՄՈՒԱ
2. ՀՈՒԱ
3. ՖՈՒԱ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑՆ ՈՒՆԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

## 1. ՄՈՒԱ - ՄՏԱՎՈՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

- ՖՐԱՆՍԵՐԵՆ
- ԳԵՐՄԱՆԵՐԵՆ
- ՉԻՆԱՐԵՆ
- ՌՈԲՈՏԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ
- ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ
- ՄԵՆԹԱԼ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
- ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

## 2.ՀՈՒԱ - ՀՈԳԵՎՈՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

- ԽՈՀԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
- ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ
- ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ԱՐՏՏԵԽՆՈԼՈԳԻԱ
- ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ
- ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
- ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

## 3.ՖՈՒԱ - ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

- ԼՈՂ
- ԳԵՂԱՍԱՀՔ
- ՖՈՒՏԲՈԼ
- ՃԱԽՄԱՏ
- ՊԱՐ
- ԲԱՍԿԵՏԲՈԼ
- ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ
- ԳՐԵՓԼԻՆԳ

# ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ






- Կրտսեր 1-ին խումբ (2-3 տ.)
- Կրտսեր 2-րդ խումբ (3-4 տ.)
- Միջին խումբ (4-5 տ.)
- Ավագ խումբ (5-6 տ.)




- Տարրական 13 դասարան (217աշակերտ)
  - I դասարան - 5
  - II դասարան - 4
  - III դասարան - 2
  - IV դասարան - 2
- Միջին 9 դասարան (122 աշակերտ)
  - V դասարան - 2
  - VI դասարան - 2
  - VII դասարան - 2
  - VIII դասարան - 1
  - IX դասարան - 2
- Ավագ 2 դասարան (17 աշակերտ)
  - X դասարան - 1
  - XI դասարան - 1

# ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՆԵՐԸ



# ԴՊՐՈՑԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐ



## 2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

# ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

**208**

**ԿԱՆԱՅՔ**
**144**




**ՏՂԱՄԱՐԴԻԿ**
**64**



## «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ԿԱԶՄԵԼ Է 208 ԱՇԽԱՏԱԿԻՑ ԵՎ 152 ԴՐՈՒՅՔ, ՈՐԻՑ

| ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ | ԴՐՈՒՅՔ |
|---|---|---|
| ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ | 33 | 31 |
| ԴՊՐՈՑ | 113 | 70 |
| ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ | 29 | 23 |
| ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ | 17 | 15 |
| ՓԱԿ ՄԱՀԱԴԱՇՏ | 16 | 13 |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 208 | 152 |

ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ **32-Ը ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԵՆ**, ՈՐՈՆՑԻՑ 27-Ն ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ 5-Ը ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ:

## ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ. 2020-2021 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

# ՄԱՐԶՉԱԿԱՆ ԿԱԶՄ

| ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ | ՍՊՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՊԵՏ | ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ | ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ |
|---|---|---|---|
| 7 | 1 | 1 | 1 |

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐ




- Ադմինիստրատիվ՝ 22,336,700.8
- Դպրոց՝ 558,065,331
- Մանկապարտեզ՝ 120,358,992
- Սպորտ՝ 93,722,990.1

**794,484,013.8**

# ԾԱԽՍԵՐ




- Ադմինիստրատիվ՝ 284,974,910.1
- Դպրոց՝ 560,248,024.2
- Մանկապարտեզ՝ 134,270,291.4
- Սպորտ՝ 224,691,421.7

**1,204,184,647,5**

# ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

- 2021թ. հունիսի 7-27-ն ընկած ժամանակահատվածում Տնտեսագիտության բարձրագույն դպրոց ազգային հետազոտական համալսարանի(**Вышка**) կողմից կազմակերպված որակավորման բարձրացման ծրագրին մասնակցեց դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչներից Սոֆյա Օստրոգորսկայան՝ «Ռուսերենի դասավանդումը դպրոցում» թեմատիկայով:

- 2021թ. օգոստոսի 16-31-ը իրականացվեցին վերապատրաստումներ տարրական դպրոցի անձնակազմի համար հետևյալ մասնագիտական բլոկներով:

    - Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները և դասի պլանավորումը տարրական դպրոցում:
    - Նորովի մոտեցում ուսուցման կազմակերպման գործընթացին տարրական դասարաններում. Ֆենոմենակենտրոն կրթությունն և ՖՈՒՄՈՒՀՈՒԱ-ն:
    - ՏՀՏ առցանց ու ինտերակտիվ գործիքներն ուսումնական գործընթացում:
    - Moodle ուսուցման կառավարման էլ.հարթակի կիրառությունը դպրոցում:
    - Առարկայական դասավանդման մեթոդիկա:

Վերապատրաստումներն անցկացվել են թե՛ մեր անձնակազմի, թե՛ հրավիրյալ մասնագետների կողմից:

# ԿՐԹԱԹՈՇԱԿ



**2020 թվականից ՈՒՍՀ-ն կրթաթոշակներ է  սահմանել այն աշակերտների համար, որոնք ուսումնական տարվա ընթացքում աչքի կընկնեն ակադեմիական առաջադիմությամբ, սպորտի և արվեստի բնագավառի ձեռքբերումներով:**

***«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԿՐԹԱԹՈՇԱԿ***

***ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ***

# «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԿՐԹԱԹՈՇԱԿ



ՀԱՄՐԱԹՅԱՆ
ԷՐԻԿ 5-ՐԴ ԴԱՍ.



ՂՈՒԿԱՍՅԱՆ –
ԱՆԱՀԻՏ 5-ՐԴ ԴԱՍ.



ՄՈՎՍԵՍՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ 5-ՐԴ ԴԱՍ.



ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՐԿ 7-ՐԴ ԴԱՍ.



ՍԱՀԱԿՅԱՆ
ԼԻԱՆԱ 9-ՐԴ ԴԱՍ.

# ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ



ՍԻՄՈՆՅԱՆ
ՄԵՐԻ 4-ՐԴ ԴԱՍ.



ՓԱՐՎԱՆՅԱՆ
ԱՐԱՅԻԿ 4-ՐԴ ԴԱՍ.



ՀԱՐԹՈՒՆԻ
ԳԱԲՐԻԵԼ 5-ՐԴ ԴԱՍ.



ՍԱՐԳՍՅԱՆ
ԱԼԻՍԱ 5-ՐԴ ԴԱՍ.



ՀԱԿՈԲՅԱՆ
ԷՐԻԿԱ 6-ՐԴ ԴԱՍ.



ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՐԻԱՄ 7-ՐԴ ԴԱՍ.



ՎՐԹԱՆԵՍՅԱՆ
ԱՆՈՒՇ 12-ՐԴ ԴԱՍ.

# ՆՇԱՆԱԿԱԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Անցած ուսումնական տարին թե՛ մեր երկրի, թե՛ մեզ համար լի էր իրադարձություններով:**

**Չնայած բոլոր մարտահրավերներին, ուսուցիչներն ու վարչակազմը մեկտեղեցին բոլոր ջանքերը՝ դպրոցում ուսուցումը հետաքրքիր և գրավիչ դարձնելու համար: Տարվա ընթացքում անցկացվել են մի շարք միջոցառումներ և հանդիպումներ նշանակալի մարդկանց հետ, որոնց ընթացքում աշակերտները հանդես են եկել որպես ակտիվ մասնակիցներ:**



# ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ



## ՄԱՐԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ Գեղասահքի ֆեդերացիայի կողմից կազմակերպած Հայաստանի գեղասահքի առաջնությանը գրավել է 1-ին հորիզոնականն ու դարձել Հայաստանի գեղասահքի չեմպիոն:



## ԷՐԻԿ ՀԱՄՐԱԹՅԱՆ

«Կենգուրու» և «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթներին ճանաչվել է հաղթող՝ հավաքելով առավելագույն միավորներ միաժամանակ երկու մրցույթներում:



## «ԳԱԶՊՐՈՄ 4» ԹԻՄ

«Լեգոստարտ» մրցույթում հաղթող է ճանաչվել «Գազպրոմ 4» թիմը:

ՔՐԻՍՏԻԱՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՖՐԱՆԿՅԱՆ ԱՐՍԵՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ



## ՌԱՖԱՅԵԼ ՄՈՎՍԵՍՅԱՆ

ABAC2021 մենթալ թվաբանության միջազգային օլիմպիադայում դարձել է 5-ակի սուպերչեմպիոն :

# ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

## ԳԱԲՐԻԵԼ ՀԱՐԹՈՒՆԻ

Իտալիայում կայացած «Hippo» անգլերենի միջազգային օլիմպիադայի եզրափակիչ փուլում զբաղեցրել է պատվավոր 1-ին հորիզոնականը և պարգևատրվել է ոսկե մեդալով:





## ՆԱՏԱԼԻ ԱՔՍՅԱՆ

Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում տեղի ունեցած WAMAS 2021 մենթալ մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայում արժանացել է 1- ին կարգի մրցանակի:



## ԷՐԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆ

Տ. Պետրոսյանի անվան Շախմատի տան կողմից կազմակերպված շախմատի երրորդ կարգի որակավորման մրցաշարում զբաղեցրել է առաջին հորիզոնականը:





## ՌԱՖԱՅԵԼ ՄՈՎՍԵՍՅԱՆ I ՆԱՏԱԼԻ ԱՔՍՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 29-ին տեղի ունեցած GAJSMA 2020 մենթալ թվաբանության միջազգային հեռավար օլիմպիադայում արժանացել են առաջին կարգի մրցանակի:

# ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

## Կրթական հավաք (EduCamp)
## Զվարճալի ամառ



















# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



























# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ






- Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների նախաշեմին կրկին կազմակերպվել է ավանդույթ դարձած բարեգործական ցուցահանդես-վաճառք, և վաճառքից ստացված ողջ հասույթը՝ 2 350 000 դրամը, համաչափ մասնաբաժնով ուղղվել է Արցախի Մարտակերտի շրջանի Մեծ-Շեն գյուղի Կառլեն Եսայանի անվան միջնակարգ դպրոցին և Սյունիքի մարզի Դավիթ Բեկ գյուղի միջնակարգ դպրոցին:

- «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամին ամեն ամիս կատարվել է 200.000 ՀՀ դրամ նվիրաբերություն:

- Հայաստան համահայկական հիմնադրամի «Մենք ենք, մեր սահմանները, բոլորս Արցախի համար» խորագրով համազգային դրամահավաք-արշավի շրջանակում հատուկ բացված հաշվեհամարին փոխանցվել է 6,5 մլն դրամ:

- Արցախից Երևան տեղափոխված 16 աշակերտներ անվճար հիմունքներով իրենց կրթությունն են ստացել կրթահամալիրում:

# ՄԵՐ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՅՏՆԻ ՀՅՈՒՐԵՐԸ

1. Հյուրընկալել ենք Տնտեսագիտության բարձրագույն դպրոց ազգային հետազոտական համալսարանի(Вышка) ներկայացուցիչներին՝ պրոռեկտորի տեղակալ Կոզակ Մարինային, օտարերկյա ուսանողներին ներգրավելու հարցերով մենեջեր Սինցովա Եկատերինային և Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի հայաստանյան ներկայացուցչին՝ Միրզախանյան Նոնային:

2. Հյուրընկալել ենք «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Հովիկ Մուսայելյանին, որ 2004 թվականից(«Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի հիմնադրումից) մինչ օրս ղեկավարում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առաջատար կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը:












# ՄԵՐ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՅՏՆԻ ՀՅՈՒՐԵՐԸ

3. Աշակերտներին այցելել էր գործարար, դասընթացավար Վահրամ Միրաքյանը, ով կիսվեց իր հաջողությունների բանաձևով, ներկայացրեց գործարարության մերօրյա զարգացումները նաև վիրտուալ տիրույթում:

4. Հյուրընկալել ենք բռնցքամարտիկ, պրոֆեսիոնալ ռինգում առանց պարտության 26 մենամարտ վարած և բազմիցս աշխարհի չեմպիոնի տիտղոսին արժանացած Վիկ (Վախթանգ) Դարչինյանին:

5. Վարպետության դաս ու ընկերական խաղ անցկացրեց բասկետբոլի «VBET Հայաստանի գավաթի» չեմպիոն, Հայաստանի բասկետբոլի Ա-Լիգային բասկետբոլային ակումբ «Մեղ Ֆոքսիս»-ը:








# ՃՐԱԳԵՐ















Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպանը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Վարչության նախագահ-Գլխավոր տնօրենը և Ուսումնա-սպորտային համալիրի տնօրենը շրջայց կատարեցին կրթահամալիրի տարածքում:

ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ, Փ. ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ 55/25
WWW.GAUS.AM
INFO@GAUS.AM

ԴՊՐՈՑ` +374 12-620-626
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ` +374 12-620-624
ՍԱՀԱԴԱՇՏ` +374 12-620-631
ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ` +374 12 620-630